

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայկական Տեղեկատվության և Խորհուրդի Կենտրոնի նպատակն է՝ բարելավել Լոնդոնի հայ համայնքի ընչազուրկ անդամների կյանքի պայմանները, հատկապես նրանց, ովքեր տառապում են աղքատության և միայնության մեջ: Կենտրոնը օգնություն է ցուցաբերում համայնքի անդամներին, վերջիններիս ունեցած զանազան կարիքների բնագավառում: Վերոհիշյալի թվին են դասվում սոցիալական ապահովությունը, կրթությունը և մշակութային ծառայությունները: Բոլոր հայերը կարող են օգտվել Կենտրոնի ծառայություններից:

Հ.Տ.Խ.Կ.-ը ապահովում է անվճար, վստահելի և անկախ տեղեկատվություն և խորհուրդ: Նրանք ովքեր օգտվում են Կենտրոնի ծառայություններից, պետք է հարգեն Կենտրոնի մասնագիտական մոտեցման բոլոր հարցերին: Հ.Տ.Խ.Կ.-ի Առողջապահության Խորհրդատու Աշխատողը (ԱԽԱ), Հրաչիկ Սարեանը ձեզ կարող է օգնել ներքո հիշված հետեվյալ ձեռնարկ:

1. Տնային Այցեր

Կազմակերպել տնային-հիվանդանոցային այցեր, ձեր առողջական վիճակի, դրա հետ կապված անհրաժեշտ խնամքի վերաբերյալ խորհուրդ ստանալու համար: Հատկապես, եթե ձեր հիվանդության պատճառով անկարող եք ճամփորդել կամ զբաղված եք որևէ մեկին խնամելով: Դուք կարող եք ԱԽԱ-ին հեռաձայնել գրասենեակային ժամերում, պահանջելով նման այցելություններ:

2. Ինչպես Խորհուրդ Ստանալ Առողջության Մասին

Դուք կարող եք առողջության և խնամքի հետ կապված խորհուրդ ստանալ Հայաշէնում: Ուրբաթ օրերը, ճաշից հետո ժամը 1.30-2.30 կամ հնարավորության դեպքում նախօրոք վերցրեք ժամադրություն երկար չսպասելու համար: Խնդրում ենք ժամադրությանը չներկայանալու կամ ուշանալու դեպքում մեզ տեղյակ պահել:

3. Ինչպես Օգտվել Պետական Առողջապահության Ծառայություններից

Մեր նպատակն է օգնել, օրենքով սահմանված առողջապահության և խնամքի մատակարարման պետական ծառայությունների և տեղական իշխանությունների սիստեմից օգտվելու:

- Կապ հաստատել ձեր թաղային բժշկի «GP» (Թերապտիք Բժիշկ) ատամնաբուժի, ակնաբուժի, թաղային բուժքրոջ, պոլիկլինիկայի, ուռքերի մասնագետի, հիվանդանոցների, հասարակական աշխատողների և այլ առողջապահության-խնամքի մասնագետների հետ, առողջական հարցերը նախօրոք հայտնաբերելու և դրանց պատասխանները գտնելու նպատակով:

- Օգնություն թաղային բժշկի մոտ գրանցվելու կամ անհրաժեշտության դեպքում բժշկին փոխելու մեջ:

- Թարգմանության կազմակերպում՝ ձեր թաղային բժշկի «GP» (Թերապտիք Բժիշկ), հիվանդանոցի և այլ ժամադրությունների համար:

- Օգնություն հիվանդանոց այցելելու և այլ ժամադրությունների հետ կապված երթևեկության կազմակերպման մեջ:

- Ֆիզիկական և հոգեկան հիվանդության դեպքում հասարակական ծառայությունների մոտ գրանցվելու:

4. Ինչպես Կապտապանենք Ձեր Ծախերը

- Կապ կհաստատենք առողջապահության մասնագետների հետ, ձեզ անհրաժեշտ հատուկ հարցերի պատասխանները ստանալու նպատակով:

- Բողոքներ ներկայացնել առողջապահության և խնամքի հետ կապված ծառայությունների անփութության դեմ, ձեր կողմից նամակներ գրելով, հեռախոսելով և ձեր առողջապահական շահերը պաշտպանելու մեջ:

5. Լուսարանություն Առողջապահության մասին

Դուք կարող եք հաճախել եւ մասնակցել Հայաշէնում կազմակերպվող առողջապահության ուսուցումներին եւ միջոցառումներին, որը ավելացնելու է ձեր առողջապահութեան գիտելիքները:

6. Այլ Կանոններ

Վերոհիշյալ ծառայությունները արդյունաւետ կերպով կատարելու համար, խնդրում ենք ուշադրությամբ կարդալ հետեւյալ կանոնները եւ մեզ հետ համագործակցել դրանց իրականացման գործում:

- Դուք պետք է ներկայացնեք ձեր հարցման-անձնական պայմանների հետ առնչվող փաստաթղթերի տեղեկության եւ տվյալների մասին:

- Դուք պետք է ԱԽԱ-ին հայտնեք ձեր կեցության մասին փոփոխությունները, օրինակի համար, եթէ փոխել եք ձեր թաղային բժշկը «GP», ձեր հասցեն, հեռախոսի համարը կամ փոխվել է ձեր հիվանդութեան բնույթը:

- ԱԽԱ-ն առաջին հերթին ձեզ միայն խորհուրդ եւ տեղեկություն է տրամադրելու, թե տվյալ դեպքում ինչպես վարվեք: ԱԽԱ-ի տրամադրած խորհուրդի վերջնական որոշումը ձերն է: Հ.Տ.Խ.Կ.-ը պատասխանատվություն չի կրում ձեր որոշման պատճառով հետեւանքների վերաբերյալ: Այն դեպքում, երբ ԱԽԱ-ը գործում է ձեր անունից, խուսափելու համար ձեր սխալ հասկանալուց, նա պետք է ձեզ հետ խորհրդակցի: Եթէ դուք ազնվորեն եւ ջանասիրությամբ չաջակցեք նրան, մենք իրավունք ունենք հրաժարվել ձեզ ապագա օգնություն ցույց տալուց:

Վերոհիշյալը, իր մեջ պարունակում է մեր կանոնների ապահովության բնույթի խախտումը, վիրավորական արտահայտությունների օգտագործումը կամ Հ.Տ.Խ.Կ.-ի աշխատողներին վտանգով սպառնալը: Եթէ դուք հատուկ կարիքներ ունեք, օրինակ՝ թարգմանության, երթեւեկության միջոցների, տնային այցերի հետ կապված, պետք է տեղեկացնել ԱԽԱ-ին ամենաքիչը 2 օր առաջ:

7. Այլ Օգնություններ

Եթէ ունեք այլ օգնության կարիքներ, օրինակ՝ բարեկեցության, ներգաղթի, տնային եւ այլ, ԱԽԱ-ն ձեզ կարող է ուղղել Հ.Տ.Խ.Կ.-ի Խորհրդատվության ծառայություններին:

8. Գանգատներ

Հ.Տ.Խ.Կ.-ի այս կամ այն ծառայությանը վերաբերող գանգատները պետք է կատարվեն գրավոր ձեւով եւ ուղղված լինեն Գործադիր Ղեկավարին:

Առաջին քայլ - Եթէ դուք որեւէ շտապ մտահոգություններ կամ գանգատ ունեք, խնդրվում է գրավոր ներկայացնել Գործադիր Ղեկավարին, ամփոփելով խնդրի իրողությունները թվարկումով, անուններով եթէ կարիքը կա ել մանրամասնություններ: Մենք կը հաստատենք ձեր նամակը 10 օրվա մեջ, ապա մանրամասն կը քննարկեք ձեր բողոքը: Եթէ դուք չեք կարող գրավոր ներկայացնել գանգատը, Գլխավոր Գործադիրը կարող է օգնել ձեզ գրելու գանգատի մանրամասնությունները:

Երկրորդ քայլ - Հ.Տ.Խ.Կ.-ը հույս ունի որ գանգատները լուծվեն Առաջին քայլում: Սակայն, եթէ դուք գոհ չեք այդ ընթացքին որ խնդիրը պատասխանվել է, խնդրվում է գրել Հ.Տ.Խ.Կ.-ի Ատենապետին որ կը կարգադրե խնդրի քննարկումը Վարչության կողմից, որպեսզի խնդիրը լուծվի:

Խնդրվում է նկարագրել հետեւյալները ձեր նամակի մեջ:

- Մի ամփոփ գրություն ձեր գանգատից:

- Մի հեռախոսի թիվ ել հասցե, որով ձեզ կարելի է կապվել:

Մենք կփորձենք պատասխանել ձեր գանգատին 10 աշխատանքային օրվա ընթացքին: Եթէ խնդրին մանրամասն պատասխան չկարողանանք տալ, նշելու ենք թե երբ լրիվ պատասխան կարելի է սպասվի մեր կողմից:

Հ.Տ.Խ.Կ.-ի Գլխավոր Գործադիրը - Chief Executive,

CAIA, Hayashen, 105A Mill Hill Road, Acton, London W3 8JF – Tel: 020 8992 4621